**ՄԱՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ,** *Սիմվոլիզմ. արձագանքը հայ կերպարվեստում, XIX դարի վերջ – XX դարի սկիզբ, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, 179 էջ:*




*ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և Արվեստի ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ հրատարակվել է արվեստագիտության թեկնածու Մանե Մկրտչյանի մենագրությունը (խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյան)՝ նվիրված գեղարվեստական ամենաբազմաշերտ ուղղություններից մեկին՝ սիմվոլիզմին և նրա դրսևորումներին XIX դ. վերջի և XX դ. սկզբի հայ կերպարվեստում:*

*Մինչ օրս լիարժեքորեն չի բացահայտվել սիմվոլիզմի տեղն ու դերը հայ կերպարվեստում: Մինչդեռ այս ուղղությանը հարել են հայ արվեստի խոշորագույն ներկայացուցիչները՝ Վարդգես Սուրենյանցը, Եղիշե Թադևոսյանը, Մարտիրոս Սարյանը, Հակոբ Գյուրջյանը և ուրիշներ: XIX դ. վերջին Ֆրանսիայում առաջացած սիմվոլիզմը կարճ ժամանակահատվածում գրավեց ողջ Եվրոպան, նաև Ռուսաստանը: Այս բազմաբովանդակ գեղարվեստական ուղղությունը նշանակալի դեր ունեցավ նաև հայ գրականության մեջ և արվեստում: Պատմական ծանր իրադարձությունների բովով անցնող հայ արվեստագետների համար ևս սիմվոլիզմը ոգեշնչման յուրօրինակ աղբյուր դարձավ: Նշենք, որ հայ արվեստում սիմվոլիզմի հարցերի քննության առումով բացառիկ են Ա. Աղասյանի «Մարտիրոս Սարյան. վաղ ստեղծագործությունը» և «Սիմվոլիզմը և Մարտիրոս Սարյանի ստեղծագործությունը» մենագրությունները:*

*Մ. Մկրտչյանը հայ արվեստաբանության մեջ առաջին անգամ համալիր ուսումնասիրություն է գրել մի շարք հայ անվանի արվեստագետների ստեղծագործության մեջ սիմվոլիզմի դրսևորումների մասին, քննության առել հայ պարբերական մամուլի, մասնավորապես «Բանբեր գրականութեան և արուեստի», «Գեղարուեստ» հանդեսների՝ սիմվոլիստական ուղղությանը վերաբերող տեսական հոդվածները, ճշտել Վարդգես Սուրենյանցի արվես-*

*տում սիմվոլիզմի ազդեցությունը կրող աշխատանքները, մեկնաբանել սիմվոլիզմի դրսևորումները Եղիշե Թադևոսյանի և Հակոբ Գյուրջյանի արվեստում, զուգահեռ տարել Մարտիրոս Սարյանի գեղագիտական հայացքների և սիմվոլիզմի գեղագիտության միջև, որոշարկել սիմվոլիզմի դերը Վահրամ Գայֆեճյանի արվեստում:*

*Նշենք, որ Մ. Մկրտչյանը երկար տարիներ զբաղվում է սույն թեմայի ուսումնասիրությամբ. գրել է մի շարք գիտական հոդվածներ ու կարդացել զեկուցումներ: Այս մենագրությունը նրա անդրանիկ գիրքն է:*

*Աշխատության առաջին գլուխը՝ «Սիմվոլիզմի դարաշրջանը», ներկայացնում է սիմվոլիզմի սկզբնավորումը, դրա նախապատմությունը և հենակետերը: Համառոտ անդրադարձ է կատարվում այդ ուղղության դրսևորումներին գրականության, երաժշտության, թատրոնի ասպարեզներում: Հեղինակը առանձին արվեստագետների օրինակով առավել մանրամասն քննում է դրա ազդեցությունը արևմտաեվրոպական կերպարվեստում: Մի ամբողջական մաս նվիրված է ռուսական սիմվոլիզմին, ներկայացվել են դրա յուրահատկությունները, տեսական ամուր հիմքը և գեղարվեստի բարձրարժեք նմուշները:*

*Երկրորդ գլուխն անդրադարձ է հայ կերպարվեստում սիմվոլիզմի դրսևորմանը XIX դ. վերջին և XX դ. սկզբին: Առանձին ուշադրություն է հատկացված 1903 թ. «Բանբեր գրականութեան եւ արուեստի» հանդեսում լույս ընծայված՝ Նիկողայոս Ադոնցի «Գրական նշմարներ. Դեկադանս եւ սիմբոլիսմ» հոդվածին, որն իր խոր վերլուծական մտքի շնորհիվ բացառիկ նշանակություն ունի. «...հեղինակը ներկայացնում է սիմվոլիզմի պատմությունը, դրա սկզբնավորողներին ու հետևորդներին, սիմվոլիզմի դիրքերից ելնելով՝ նշում բանաստեղծների և նկարիչների առջև դրված խնդիրները» (էջ 59):*

*Հաջորդ ենթագլուխներում Մ. Մկրտչյանը խոսում է նկարիչներ Վարդգես Սուրենյանցի, Եղիշե Թադևոսյանի, Մարտիրոս Սարյանի, քանդակագործ Հակոբ Գյուրջյանի ստեղծագործությունների մասին, որոնք այս կամ այն կերպ կրում են սիմվոլիզմի ազդեցությունը: Արվեստաբանական վերլուծությունը հնարավորինս հստակ բացահայտում է սիմվոլիզմի բազմաբնույթ դրսևորումները նրանց գործերում:*

*Մանե Մկրտչյանի աշխատությունը լույս է տեսել ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի աջակցությամբ:*

**ՍԱՏՐՅԱՆ Ա. Գ.**
*Արվեստագիտության դոկտոր*